

434

82
7-48

1899

Ակնազարք
պատգիր !

ԵՐԻ 003

2011

~~82-3~~ 11257
~~7-63~~

2. ԳԻԿԵՆԱ

ԽԵԼԱԳԱՐԻ ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆԸ

(„ՊԻԿԱԿԱՆ ԿԵՐՆՔԻՑ“)

Թարգմ. Ա. Տ.—Մ.

Գիւն է 7 կող.

ԹԻՖԼԻՍ
Տպարան Մ. Շարածէ և ընկ. Նիկ. 21
Tun. M. Шарадзе и Ко^о Ник. 21
1899

823
7-488

48.

2. ՊԻԿԱՆՈՒՄ


ԽԵԼԱԳԱՐԻ ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆԸ

(“Պիկանում Կ. Ս. Բեհեզ”)

1001
628

Թարգմ. Ա. Տ.—Մ.

221



ԹԻՖԼԻՍ

Տպարան Մ. Շարաձէ և ընկ. Նիկ. 21
Tup. M. Shabadze u Kev Nik. 21

1899

1029 - ии

Пресел Грач

ԽԵԼԱԳԱՐԻ ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆԸ

Дозовано цензурою. 23-го ноября 1898 г.
Тифлисъ.

Խելագար.... այս, ինչ սոսկալի կերպով էր
հնչում այդ բառը ականջիս մի ժամանակ.... Խե-
լագար. ինչպէս կը ցնցէր ինձ այդ խօսքը մի քանի
տարի առաջ. աննկարագրելի սարսափ կ'ազդէր ինձ,
արիսնս եռ կը գալ երակներումս, սառը քրտինքը
ցօղի պէս կը ծածկէր կաշիս, իսկ ծնկներս վախից
կը ծալուէին: Իսկ այժմ նոյն իսկ դուք է դալիս:
Այդ խօսքը այժմ մի մեծահնչիւն և պատկառելի
տիտղոս է թւում ինձ: Ցոյց տուէք մի միապետ, ո-
րի կնճոռոտ ճակատը այն սարսափն ազդի, ինչպիսին
ազդում է խելագարի փայլուն աչքերը իւր բոլոր
շրջասատողների վրայ: Արքայական դահիճի թուկն
ու կացինը երբէք այնպէս մահառիթ չեն, ինչպէս
խելագարի ահարկու բազուկը: Այս, ճշմարիտ եմ
ասում ձեզ, խելագարութիւնը ինքն ըստ ինքեան
վեհ բան է: Նոտած ես քեզ համար երկաթի վան-
դակումդ, որպէս վայրենի առիւծ, կրճացնում ես
ատամներդ և ահեղ մռնչում խաղաղ ու ձիգ գի-
շերները՝ ծանը շղթաների ուրախ շառաչիւնի ձայ-
նակցութեամբ. իսկ յետոյ այդ հրաշալի երաժշտու-
թեան ազդեցութիւնից էքստագի մէջ ընկնելով,
պառկում ես յարդի վրայ ինքնագոհ կերպով:

Ուռում, կեցցէ գժատունը: Այս, սա ամենա-
հիանալի տեղն է:

Նո յիշում եմ այն օրերը, երբ երկիւղ էի կը-
րում խելագարուելուց: Ինչպէս յաճախ, կէս գիշե-
րային լուռ ժամին այդ սոսկալի մտքի ազդեցու-
թեան տակ յանկարծ վեր էի թռչում տեղիցս սար-
սափելի ցնցումներով և ծնկաչոք ազօթում, երկար
ազօթում, որ ամենազօր էակը աղատի ինձ մեր
ցեղի վրայ ծանրացող անձծքից: Ինչպէս յաճախ
ուրախ խաղերի և զուարձութիւնների ժամանակ
յանկարծ պատում էր ինձ բնագդային մռայլ թա-
խիծ և ես հեռանում, քաշվում էի զէպի տուան-
ձնութեան և ինձ ու ինձ անցկացնում թախծալի-
ժամերը, ուշագրութեամբ հետևելով, թէ ինչպէս
տենդը հետղնետէ կանում է իմ թոյլ և աստիճա-
նաբար հիւծուող ուղեղը: Ես գիտէի, որ կատաղու-
թեան և խելագարութեան սաղմը արեանս մէջ
էր, որ նա խոր թագնուած էր իմ նեարգերս, իմ
ոսկորներիս ուղեղի մէջ. որ մեր տոհմի մէկ սե-
րունդը անց է կացրել իւր դարը առանց վարա-
կուելու այս ժառանգական ժանտախտով և այժմ
ինձանում պիտի վերածնուի այդ ցաւը և ինձանով
պիտի սկսուի կատաղած մարդկանց մի նոր շարք:
Այդպէս է եղել առաջ և հետեաբար ես գիտէի որ
այդ—այդպէս էլ կլինէր յետագայում: Խըրեմն առան-
ձնանալով աղմկալից դահլիճի մի անկիւնը, ես նկա-
տում էի, թէ ինչպէս յանկարծ լուռում էին հիւրերի

ուրախ խմբերը, աչքով էին անում զէպի ինձ, քըշ-
փչում էին իրար մէջ, և ես հասկանում էի, որ ես
էի նրանց խօսակցութեան առարկան, որ նրանք
խօսում էին այն մարդու մասին՝ որը իւր բոլոր
մտաւոր ու բարյական ոյժերը կորցնելուն մօտ է:
Առաջ առաջ արդէն խորթանալով մարդկանց հա-
սարակութիւնից, ես սկսում էի հետպհետէ մունջ
վինել և մտածողութեան մէջ ընկղմուիլ:

«Այսպէս անցան տարիներ, շատ երկար տարի-
ներ: Այստեղ էլ երբեմն չափազանց երկար են լի-
նում գիշերները, *) բայց գոքա ոչինչ են, համե-
մատած իմ այն ժամանակուայ անհանգիստ գիշեր-
ների և պատանեկութեանս սարսափելի ցնորքների
հետ: Այժմ էլ սարսուռ եմ զգում, երբ յիշում եմ
այն տարիները, և սիրտս ուզում է ճաքել երկիւղից
երբ երեակայում եմ, այն հըշների մռայլ պատկեր-
ները, որոնք զուրս էին ցցում իրանց այլանդակ
գիմքերը իմ առանձնացած ննջարանի բոյր ան-
կիւններից: Կունաւալով դիմավերս և զայրացնելով
ինձ իրանց երկար լեզուներով, նրանք խժվիում
էին ականջիս շուրջը և վայրենի ու խուլ ծիծաղով

*) Այս պատմութիւնը, որպէս գժանոցի խելագարի
մի ինքնագիր յիշատակարան, պահուած է եղել այդ գժա-
նոցի մի բժշկի մօտ, որից անցնում է մի պատօրի ծեռք,
իսկ սա յանձնում է Պիկվիլին: (Պիկվիլնեան կլուքի յի-
շատակարանը Պ. Ճ.Ա.):

ՀՀՆՉՈՒՄ էին ականջիս, թէ այն հին տահ յատակը, որտեղ վախճանուեցաւ: Հօրս հայրը, շաղախուած է նորա սեփական արիւնով, որ նա ինքը հոսեցրեց իր երակներից կատաղի խելագարութեան ըռպէին: Զուր էի մատերու խցկում ականջներու և գլուխս թագդնում բարձերիս մէջ, որ չլսեմ. հրէշներն այն-պէս վայրագ և կատաղի կերպով էին ճշում, որ չը-լսել անկարելի էր. նորանք բղաւում էին, որ պա-պիս նախորդ սերնդի մէջ խելագարութիւնը ծա-ծուկ դրութեամբ է մնացել, սակայն պապիս պապը ամբողջ տասնեակ տարիներ ապրել է շղթաներով պատին կապած և ոտն ու ձեռքը նոյնպէս շղթա-յած, որովհետև նրա մէջ մի անզուսալ ձգտում է ե-ղել իրան պատառուելու: Հրէշները ճիշտ էին ա-սում—եզ ինքս գիտէի այդ. շատ լաւ գիտէի: Ես ինքս փնտուել և գտել էի մեր տոհմական թղթե-րում բոլոր մանրամասութիւնները, չնայելով որ ա-մեն կերպ աշխատում էին թագցնել ինձանից: Հա, հա, ես շատ խորամանկ եմ. ինչ անենք, որ խելագար եմ:

Վերջապէս ցաւը բռնեց ինձ իւր բոլոր ուժով և ես զարմանում էի, որ մի ժամանակ ինձ այնքան սոսկալի էր թւում խելագարուելու միաքը: Այժմ ես կարողանում էի մարդկանց մէջ գուրս գալ, լինել խելացի մարդկանց շրջանում, ասել, խօսել, սրախօ-սել. առաջարկութիւններ էի անում և ծրագիրներ կազմում և իրագործեցի նոյն-իսկ շատ անմիտ ծը-

րագիրներ, որոնք իրանց տարօրինակութեամբ զար-մացրին մինչև իսկ շատ հեռատես պարոնների: Սա-կայն ես զգում էի, որ խելագարութիւնս սկսուած է. ես թուլանալու շափ քրքջում էի սենեակումս միայնակ, իսկ ծանօթներիցս և ոչ մէկը չէր էլ կաս-կածում, թէ զլիսիս ուղեղը հիւծվում և խանգար-վում էր օրի վրայ: Ինչպիսի հրճուանքով շնոր-հաւորեցի ինքս ինձ, որ կարողացայ այդպէս ճար-պիկ կերպով մոլորեցնել, խարել և յիմարացնել իմ ամենասիրելի բարեկամներիս, որոնք ինձ համարում էին սրամիտ և հնարագէտ, գեղեցիկ ծրագիրներ կազմող, որը պատրաստ է իրանց հետ ձեռքի տուած գործել յօգուտ ընդհանրութեան: Օ՛, եթէ զիտենային նրանք, թէ ինչ մարդու հետ գործ ու-նին: Պատահում էր երբեմն, բարեկամներիցս մէկը ճաշում էր ինձ հետ՝ դէմ առ դէմ նստած, և խըն-դում էր ինձ հետ՝ գույնատուէր նա, և ինչպիսի արագութեամբ գուրս կը թուչէր տանից, եթէ մի ըռպէ մարզովն անց-նէր, որ հետը նստած իւր ամենասիրելի բարեկա-մը՝ սուր գանակը ձեռին—ոչ այլ ոք է, եթէ ոչ, մի խելագար, որը ամեն մի ըռպէ կարող է նրա կուրծքը խրել գանակը՝ շնորհիւ ժառանգական հի-ւանգութեան:

Ես ահագին հարստութիւն էի ժառանգել, գան-ձիս առատութեանը շափ չկար և ես լողում էի ա-մեն տեսակ զուարճութիւնների ովկիանոսում, և

այդ գուարճութիւնների գինը հազարապատիկ աւելի էր բարձրանում աշքումս, քանի միտք էի անում, թէ ինչպէս ճարպիկ կերպով կարողացայ քողարկել իմ աւանդական սոսկալի գաղտնիքը—ցաւս։ Եւ օրէնքը, մինչև անդամ այդ հազար աշքանի օրէնքը մոլորուեց և խելագարիս յանձնեց ահազին դրամագլխի և կալուածքների ժառանդական իրաւունքը, մերժելով տասնեւսկ խելացի թեկնածուների։ Ուր էր մնացել առողջամիտ մարդկանց գովուած նրբամտութիւնը. ինչո՞ւ դատաւորներն ու փաստաբանները, չնայած միւս ժառանդների յայտնած կասկածներին, այնուամենայնիւ ինձ վրայ հաստատեցին ժառանդութեան իրաւունքները. Բանը հէնց նրանումն է, որ խելագարը ամենքին էլ խարեց իւր խորամանկութեամբ։

Ինձ մօտ ուկի կար—ինձ պատառմ էին ամենքը. ամենքը իմ շուրջս էին պտոյտ պտոյտ անում։ Ես անխնայ վատնում էի փողերս անմիտ կերպով, և ամենքը գովարանում էին առատաձեւնութիւն։ Օ՛, ինչպէս ստորանում էին առաջիս և քծնում ինձ այն երեք հալարտ եղբայրները. նոյն-իսկ հայրները, այն ալկոր ծերունին... ինչ յարգանք ու պատիւ էր ցոյց տալիս ինձ, ինչպէս էր խունկ ծխում իմ առջև։ Ծերունին դուստր ունէր, իսկ եղբայրները քոյր—ահա բոլոր գաղտնիքը. Հինգն էլ խիստ աղքատ, շատ անդամ նոյն-իսկ շանը տալու մի չոր հացի կտոր չէին ունենում. Իսկ ես հարուստ էի. և երբ

Կրիտասարդ օրիորդին ամուսնացըին ինձ հետ, յաղթանակի ժպիտը փայլեց աղքատ արիւնակիցների ուրախ դէմքերի վրայ հէնց հարսանիքի օրուանից սկսած։ Նրանք պարզամտութեամբ երկակայում էին, թէ իրանց բոլոր սարքած ծրագիրները բաղձալի յաջորդութեամբ պահպուեցան։

Սակայն հասաւ և իմ ժպտալուս հերթը։ Բայց ինչ ժպտալ. ոչ. ես ծիծաղում, քրքջում էի. վետում էի մազերս և ցատկում ամուսնական առագաստի առջև՝ հարբած իմ փայլուն յաղթանակով։ Նրանց մտքովն էլ չէր անցնում, ի հարկէ, թէ ինչ սոսկալի զոհաբերութիւն են արել։ Սակայն նրանց ինչ փոյթ. ինչու կը մտածէին։ Նրանց ինչ պէտք էր, թէ իրանց քոյրը իւր բախտը կապել է խելացնոր մարդու հետ։ Ի՞նչ նշանակութիւն ունէր նրանց համար քրոջ բախտը նրա ամուսնու ոսկիների մօտ։ Ի՞նչ նշանակութիւն կարող էր ունենալ օդը նետած մի թեթե փետուր, համեմատած այն ոսկի շղթաների հետ, որը զարդարում է իմ մարմինը։

Բայց չնայած իմ բոլոր խորամանկութեան, այնու ամենայնիւ ես մէկ բանում չարաշար սխալուեցի։ Մենք խելագարներս բաւական նըրամիտ ենք, սակայն երբեմն շատ ենք յափշտակվում։ Իմ գլուխըս շշմել էր և ես ուժգին թափով ընկայ սարքած ցանցի մէջ. նթէ ես խելագար չը լինէի, անշուշտ իւր ժամանակին կը հասկանացի, որ երիտասարդ օրիորդը, եթէ իրա իրաւունքի լինէր, աւելի շուտ կը համաձայ-

նէր կապարի դագաղում կնքուիլ, քան ոտք դնել
իմ մարմարեայ ապարանքները հարուստ հարսի տիտ-
ղոսով։ Եատ ուշ իմացայ ես, որ նորա սիրտը ար-
դէն վաղուց գրաւուած է սեաչեայ պատանու հրա-
պուրիչ տեսքով,—միանդամ նա արտասանեց նորա
անունը քնի մէջ. անշուշտ նրան ալեկոծում էին.
վաղուց փայփայած ու խորտակուած ցնորդները։
Ես հասկացայ, որ նրան գիտմամբ զոհել են, որ-
պէս զի հայրն ու եղբայրները մի կտոր հացի աէր
դառնան։

«Այժմ ես չեմ կարողանում մտաբերել գէմ-
քեր, գծագրութիւններ, բայց դիտեմ, որ երիտա-
սարդ օրիորդը գեղեցկունու համբաւ ունէր և կա-
տարելապէս արժանի էր այդպիսի համբաւի. նա
ոքանչելի էր, այդ ես դիտեմ։ Պարզ, լուսնեակ գի-
շերները երբ շուրջս ամեն ինչ լուռ ու հանդիսատ է
և ես զարթնում եմ քնից, տեսնում եմ այս սենեա-
կիս մի անկիւնում կանգնած մի նիհարած պատկեր՝
թեթև ու թափանցիկ, երկար, թուխ մազերով, որ
շարժվում են նրա ուսերի վրայ երկնային զեփիւով
փշելով. նրա փայլուն ու վառ աշքերը սիլնդ յառած՝
ինձ են նայում անթարթ կերպով, առանց մի վայր.
կեան անդամ ուրիշ կողմ թեքուելու։ Ո՞հ, արիւնս
սառչում է երակներիս մէջ, երբ զրում եմ այս տո-
ղերը։ Սսս....այժմ էլ նա այստեղ է. ահա նա. նը-
րանն է այդ ուրուականը նորա դէմքն է և հասակը։
Սրա դէմքը գունատ է, աշքերը ինչ որ տարօրինակ

փայլ ունին, բայց ես ճանաշում եմ, և յիշում եմ,
որ բոլոր այդ գծերը նրանն էին։ Այս ուրուականը
երբէք չէ շարժվում տեղից, չէ կնճուռմ ճակատը,
յօնքերը վրայ չէ բերում և ծամածութիւններ ա-
նում, ինչպէս միւս ուրուականները, որոնցով լիքն
է խղուկս։ Բայց և այնպէս սա ինձ աւելի է սոր-
ուափեցնում, քան այն բոլոր ողիները, քան նոյն-
իսկ այն դեերը, որոնք մի քանի տարի առուջ ինձ
խելազարեցրին։ Սա ախր ուղղակի գերեզմանից է
գուրս գալիս և մահուան թարմ շունչը փչում է
դէմքից։

«Համարեա ամբողջ մէկ տարի շարունակ ես
նկատում էի, թէ ինչպէս օրէ ցօր դալկանում է
նրա գէմքը, ինչպէս արտասուրքը թաքուն կերպով
հոսում է նրա հիանալի, բայց տիրութիւնից մա-
շուած այտերով. սակայն պատճառը մնում էր ինձ
համար գաղանիք։ Վերջապէս ես իմացայ ամեն
բան։ Նա երբէք ինձ չէր սիրում—և ես ի հարկէ
չի էլ մտածում, թէ նա կարող է սիրել ինձ—բայց
չի սպասի, որ նա կ'արհամարի իմ հարսառութիւնը
և կատի այն շքեղութիւնն ու փարթամութիւնը, ո-
րով լըջապատուած էր, որի մէջ ապրում էր. այդ
ես երբէք չի սպասում։ Նա սիրում էր ուրիշին—
այդ էլ երբէք չէր անցկացել մաքուս։ Տարօրինակ
զգացմունքներ սկսեցին յուղել սիրտս և մէկը միւ-
սից մռայլ մտքեր սկսեցին փոթորկի նման կուտա-
կուել գլխումս։ Ես հեռու էի նրան ատելուց, թէ-

ալէտ սիրտս լիքն էր բուռն ատելութեամբ դէպի
նրա սիրոյ առարկան։ Ես ցաւում էի այն անագո-
րոյն վիճակի վրայ, որին մատնուած էր այդ դըժ-
բախտը՝ չնորհիւ անսիրտ ծնողի սառը հոսականու-
թեան։ Ես գիտէի, որ նրա ժամերը հաշուած են
անողոք ճակատագրից, բայց ինձ աանջում էր այն
միտքը, թէ նախ քան մահը, նա կարող է աշխարհ
քերել մի անբախտ արարած, որը ինձ պէս դար-
ձեալ դատապարտուած կը լինի կրելու ժառանգական
խելագարութեան տանջանքները…… և ես վճռեցի…
սպանել նրան։

«Մի քանի շաբաթ ես մտածում էի, թէ ինչ
տեսակ մահը աւելի լաւ կը լինի։ Առաջ մտքովս ան-
տոյնը, Յետոյ մտածեցի ջրահեղձ անել. վեր-
ցաւ թոյնը ընտրեցի կրակը։ Մեր ահազին տունը բո-
ջապէս ընտրեցի կրակը։ Մեր ահազին տունը բո-
ջերում կորած՝ իսկ խելագարի կինը ածուխ ու մո-
խիր դարձած—ինչ զմայիկելի տեսարան։ Նրկար ժա-
մանակ փայփայում էի ես այդ միտքը և թուլանա-
լու չափ քրքջում էի, երեակայելով, թէ ինչպէս խե-
լու դարդիկ կը սկսեն դատել այդ մասին, ոչնչ
լացի մարդիկ կը սկսեն դարպիկութեամբ պիտի
չը հասկանալով, և ինչպիսի ճարպիկութեամբ պիտի
խարի նրանց խորամանկ խելագարը։ Մի լաւ կա-
տակ էլ հրդեհից յետոյ կը սարքեմ. մեծ պարզե կը
խոստանամ ոստիկանութեան, եթէ գտնեն կրակ
տուողին։ Անշուշտ դրա հետամնքն այն կը լինի, որ
մի տոռողամիտ և անմեղ մարդու կախաղան կը հա-
նեն իբրև մեղաւորի—և այդ բոլորը խելագարի խորա-

մանկութեան չնորհիւ։ Սակայն աւելի խորը մտա-
ծելով, ես կրակը անյարմար գտայ իմ նպատակիս։
Ածելին դրաւեց իմ բոլոր ուշադրութիւնը։ Ա՛հ, ինչ-
պիսի բաւականութիւն էլ գտնում ես օրի վրայ,
սրելով ածելին և պատկերացնելով այն վերքը, որ
պիտի թողնէր նա իմ զոհի պարանոցի վրայ, և այն
տաք արեան հոսանքը, որ պիտի հոսէր այդ վերքից։
Վերջապէս երեացին և հին հրէշները, որոնք առաջ
էլ զեկավարում էին ինձ իմ այլ և այլ քայլերում, և
խառնիճաղանձ ձայներով սկսեցին շնչալ ականջիս,
թէ հասել է գործելու ժամը և ձեռքս դրին բաց
ածելին։ Ես պինդ սեղմեցի ձեռքումս ածելին, ա-
րագութեամբ վեր ցատկեցի տեղիցս և կուացայ գէ-
պի քնած կինս։ Նա դէմքը ծածկել էր ձեռքով ես
զգուշութեամբ հեռացրի ձեռքը, որը ընկաւ կը ծքի
վրայ։ Ինչպէս երևում էր, նա լաց էր եղել քիչ ա-
ռաջ, որովհետեւ այտերի վրայ դեռ մնացել էին
արտասուցի կաթիլներ։ Նրա գժգոյն դէմքը հեզ ու
հանդարտ էր, և այն բողէին, երբ ես նայում էի,
փայլում էր մի քննոյց ժպիտով։ Ես զգուշութեամբ
ձեռու դրի ուսի վրան։ Նա ցնցուեցաւ, բայց էլի խոր
քնի մէջ ընկղմեցաւ։ Ես աւելի ցած կուացայ……նա
ձաց և զարթնեց։

«Զեռքիս մի շարժում—և հնչիւնները ընդ միշտ
կը լուէին նրա կրծքում։ Բայց ես վախեցայ և մի քայլ
յետ քաշուեցի։ Նորա աշքերը ուշի ուշով նայում
էին ինձ և—զգիտեմ ինչու այդ պատահեց—բայց

միայն նրա հայեացքը շփոթեցրեց ինձ: Նա վեր կացաւ՝ շարունակ հայեացքը ուշի ուշով ինձ ուղղած: Ես ամբողջ մարմնով դողում էի. ածելին ձեռքս էր, բայց ես չը կարողացայ շարժուել տեղիցս: Նա սկսեց դանդաղ կերպով յետ քաշուել դէպի դուռը՝ չը թեքերով ինձնից աչքերը և նոյն հանդարտ և ուշագիր հայեացքը ձգելով վրաս: Մօտենալով դուներին՝ նա շուռ եկաւ: Հիացումն անցաւ. ես առաջ ցատկեցի և բունեցի նրա ձեռքից: Նա ճաց մի երկու անգամ և ընկաւ յատակի վրայ:

Այժմ ես կարող էի սպանել նրան առանց մի ընդդիմադրութեան, բայց նրա բարացից արդէն տանը իրարանցում էր ընկել. ես ոտնաձայն լսեցի սանդուղքի աստիճանների վրայ. ածելին տեղը դըրի, բաց արի դուռը և բարձր ձայնով օդնութիւն կանչեցի ուշաթափուած տիկնոջ համար:

«Մարդիկ եկան, բարձացրին նրան և դրեցին մահճակալի վրայ: Ամբողջ երկու-երեք ժամ նա պառկած էր անգրայ, և երբ ուշքի եկաւ ու խօսել ըսկաւ, արդէն ցնորսած էր, և սարսափելի կատաղի զառանցանքի մէջ ընկաւ:

«Բժիշկներ կանչեցինք. ամենանշանաւոր ու թանգարին բժիշկներին. նրանք սլանում էին դէպի իմ տունը շքեղ կառքերով, հիանալի ձիերով. ճոխազգեստ սպասառները կանգնում էին նրանց կառքերի յետեկին: Մի քանի շաբաթ շարունակ նրանք չէին հեռանում կնոջս անկողնի մօտից. սակայն նա

չէր լաւանում, այլ աւելի ու աւելի վատանում էր: Վերջապէս բժշկական մեծ խորհուրդ կազմեցին. խորհրդակցում էին միւս սենեկակում, հանդիսաւոր կերպով, խօսելով բժշկական արուեստի խորհրդաւոր լեզուով: Խորհրդակցելուց յետոյ Անգլիայի այդ ամենանշանաւոր էսկուլապներից մէկը ներկայացաւ ինձ խորհրդաւոր դէմքով, քաշեց ինձ մի կողմ և գիտնական մի յառաջարանից ու մխիթարական մի քանի պերճ խօսքերից յետոյ յայտնեց ինձ՝ խելագարիս, որ իմ ամուսինը խելագարուել է: Նա ինձ հետ միասին կանգնած էր բաց պատուհանի առաջ ձեռքը ուսիս դրած: Բաւական էր մի փոքրիկ ոյժ գործ դնել, որ ամենախելօք էսկուլապը գլխիվայր ներքեւի մայթը թւշէր: Դա մի շատ հիանալի բան կը լինէր և մեծ հաճոք կը պատճառէր ինձ. բայց այն ժամանակ կը բացուէր իմ գաղտնիքը, այն ինչ ես աշխատում էի խորը թաղցնել այն. և զրա չնորհիւ էսկուլապը ողջ մնաց: Մի քանի օրից յետոյ ինձ յայտնեցին, թէ հիւանդին պէտք է փակել մի սենեկակում մի փորձուած և հմուտ հիւանդապահի հակողութեան տակ.—խելագարը պէտք է հոգար իր կնոջ բանտարկութեան մասին: Ես հեռացայ քաղաքից դուրս, բաց դաշտը, որտեղ ոչ ոք չէր կարող ինձ լսել, և բարձրաձայն քրքջում էի, ու իմ վայրենի աղաղակը երկար հնչում էր լայն հովտում:

«Նա երկրորդ օրը մեռաւ, Զառամեալ ծերունին ուղեկցեց իւր սիրեցեալ դստեր դիակին մինչև

գելեղմանատուն և քնքշասիրտ եղբայրները ցօղեցին իրանց քրոջ մարմինը դառն արցունքներով. այն քրոջ, որի տանջանքներն ու վշտերը ամեննեին չը շարժեցին նրանց քար սրտերը նրա կենդանութեան ժամանակ: Այդ բոլորը իմ մէջ առաջացրին մի ուրախ տրամադրութիւն և թաղումից տուն վերադառնարով, ես այնպէս էի ծիծաղում հոգուս խորքից՝ երեսս թաշկինակով ծածկած, որ աչքերս արտասուակալեցին:

Թէպէտ ես հասայ նսկատակիս, կնոջս սպանեցի, բայց սիրտս հանդիստ չէր, հոգիս ալեկոծփում էր, զգացմունքներս բուռն յուզման մէջ էին և ես նախազգում էի, որ վաղ թէ ուշ իմ գաղտնիքը պիտի բացուի ամբողջ աշխարհի առաջ և ամենքը ինձ պիտի նորա դահիճը համարեն: Ես չէի կարողանում շարունակ թագցնել իմ վայրենի հրճուանքը և բուռն ցնծութիւնը, որ յուզում էր սիրտս: Սենեակումս մենակ եղած ժամանակ ես թռչկոտում էի, վազվողում էի, ծափ էի տալիս, թաւալփում էի, պարում էի, և իմ վայրենի ցնծութեան աղտղակը երբեմն ամբողջ տունն էր տարածփում: Նրբ ես գուրս էի գալիս բագից և տեսնում էի վողոցներում աղմկալից ամբոխը, երբ նստած էի լինում թատրոնում, լսում էի երաժշտութեան ձայնը և նայում էի պարող դերասաններին, վայրագ ուրախութիւնը այնպէս էր խռովում կուրծքս, որ ես տանջփում էի վափաղով—ցատկել բեմը և կտոր կտոր պատա-

ռոտել այդ մարդկանց ու բոռալ հրճուանքից:

Սակայն, փոխանակ դրան, ես ամուր սխմում էի ատամներս, զսպելով այդ ցանկութիւնս, ստիպում էի ինձ հանդարատ ու դանդաղ քայլել և արձակ չը թողնել սուր եղունգներս. պինդ հուզ էի տալիս ձեռքը և եղունգներովս ափսսվմում: Ամեն ինչ լաւ էր գնում և ոչ ոք գեռ չէր կասկածում, թէ ես խելագարուել եմ:

Յիշում եմ, թէ ինչպիսի հանգամանքներում ես մատնեցի գալունիքս. և դա վերջին բանն է, որ ես կարողացել եմ յիշողութեանս մէջ պահել. այժմ ես իրականութիւնը շփոթում եմ երեակայական ցնորքների հետ: Յիշում եմ վերջապէս՝ ինչպէս ինձ սառը ջրի մէջ դրին: Հա, հա, հա, գեռ կարծես այժմ էլ աչքիս առաջ են նրանց երկզոտ հայեացքները, այժմ էլ զգում եմ գեռ, թէ ինչպէս քաջաբար էր շարժեւում իմ պինդ սխմած բռունցքներով. ինչպէս խորացրի նրանց դժոյն այտերը այդ կոչտ բռունցքիս ուժին հարուածով և ինչպէս յետոյ կայծակի արագութեամբ առաջ նետուեցայ ու վազեցի, թողնելով նրանց խլացնել զատարկ տարածութիւնը անօգուտ հարայ հրոցով: Այժմ էլ երբ միտքս է ընկնում այդ վերջին սխրագործութիւնս խելացի մարդկանց շրջանում, հակայական ոյժ է գալիս վրաս: Այս,....այս, ինչպէս ճկում, ծալում է այս երկաթի վանդակը իմ ուժեղ ձեռքերում: Դժուար չէ ինձ համար մէկ ճիպոտի պէս կտոր կտոր անել դրան և



Դուրս թռչել սենեակիցս. բայց ինչի՞ համար այդ անել, երբ վերջնական նպատակի չեմ կարող հասնել: Այստեղից դուրս գամ, պիտի ընկնեմ երկար միջանցքը, յետոյ անվերջ մանր միջանցքներ՝ բազմաթիւ դոներով ու կողպէքներով. դժուար է այդքան խոչնդուների միջով ճանապահը բանալ: Եթէ նոյն իսկ յաջողուի էլ, բագում էլի պիտի դէմ առնեմ երկաթի դարպաններին, որոնք միշտ փակ են և ահագին երկաթի նիգով պնդացրած: Այստեղ ամենքին յայտնի է, թէ ինչպիսի ճարպիկ խելագար էլի ես. և պարծանք են համարում ինձ պէս խելագարին իրենց դժանոցում ունենալ:

Բայց ինչի՞ մասին եմ խօսում ես, ես մի ուրիշ բանի մասին էլ ուզում պատմել: Հա՛, այն, թէ ինչպէս մատնեցի ես գաղտնիքս: Ես ինչ որ մի ներկայացման էլի գնացել և ուշ երեկոյեան, երբ վերադայ տուն, ինձ ասացին, թէ հիւրասինեակումն ինձ սպասում է երեք եղբայրներից մէկը, որ ցանկանում է ինձ հետ խօսել մի նշանաւոր գործի մասին—ես այդ լաւ յիշում եմ: Այդ մարդու դէմ, պէտք է ասած, ես զգում էլի մի կատաղի ատելութիւն, որպիսին կարող է մի խելագար զգալ: Վաղուց ի վեր ես պատրաստ էլի իմ սուր եղունգները նրա լիտի գունչը խրել, սակայն զսպում էլի ինձ: Այժմ ինձ յայտնում էին, որ նա նստած է և ինձ է սպասում: Ես արագութեամբ վերև վագեցի: Բարեկուց յետոյ նա ինձ յայտնեց, որ առանձին է ուզում խօ-

սել հետո, ես նշան արի, ծառաներս հեռացան: Ուշ էր, և մենք—առաջին անգամ մեր կեանք քում—մնացինք երկուսս մենակ, դէմ առ դէմ:

Սկզբում ես աշխատում էի հայեացքս նրա վրայ չձգել, որովհետև գիտէի, որ իմ աշքերումս կատաղութեան կրակ է փայլում: Մի քանի րոպէ նստեցինք լուռ: Վերջապէս նա առաջինը խօսք բաց արեց: Նրա ասելով՝ այն ցոփ կեանքը, որ ես վարում էի և այն մի քանի տարօրինակ մտքերը, ուրոնք դուրս էին թռել իմ բերնից նրա քրոջ մահից անմիջապէս յետոյ, ուզում վիրաւորական են հանգուցեալի յիշատակի համար: Ի հաշիւ առնելով այժըմ շատ հանգամանքներ, որոնց վրայ նա առաջ ուշագրութիւն չեր դարձել, գալիս է այն եղակացութեան, որ ես վատ էլի վարում նրա քրոջ հետ: Նա ցանկանում էր ստոյգ իմանալ, թէ արդեօք արդարացի է նրա կասկածը, որ ես չար դիտաւորութեամբ կշամքում եմ անբախտ հանգուցեալին և ստուեր գցում նրա յիշատակի վրայ ու ակնյայտնի արհամարհանք ցոյց տալիս դէսի որբացած ընտանիքը: Իբրև թէ նորա կոչումը և նշանազգեստի պատիւը դրդում էր իրան՝ բացատրութիւն պահանջելու ինձանից:

„Այդ մարդը գնդերից մէկում սպայ էր: Պաշտօնը և աստիճանը ձեռք էր բերել իմ փողերով և քրոջ տանջանքների դնով: Ամենից առաջ նրա գըլխում էր յղացել մի սրամիտ ծրագիր—ինձ ցանցը

գցել և տիրանալ իմ հարստութեան: Նրանց տան
անդամներից ամենից շատ դա էր կակել քրոջ օձի-
քից և ստիպում, որ գայ ինձ կնութեան, թէպէտ
դիտէր, որ նորա սիրան արդէն պատկանում է այն
երիտասարդին, որը նորան սիրում էր բուռն սիրով:
—Կոչումը և նշանազգեստը դրդում էին նրան բա-
ցատրութիւն պահանջելու.... հա, հա, հա.... մինչ
դեռ այդ նշանազգեստը մի անարդ ծածկոց էր նրա
լրբութեան: Ես չը կարողացայ ինձ պահել. ակամայից
հայեացքս ձգեցի նրա վրայ, բայց դեռ ոչինչ չը
խօսեցի:

„Այդ հայեացքիցս նա այլայլուեց: Երկուտ մարդ
չէր նա, սակայն երեսի դոյնը թռաւ և նա յետքա-
շեց իւր աթոռը, իսկ ես աւելի ևս դէպի առաջ
քաշեցի աթոռս և ծիծաղեցի—ես շատ ուրախ էի—
նա դողաց ամբողջ մարմնով, կատաղութիւնը աւե-
լի սկսեց եռալ արեանս մէջ: Նա սարսում էր:

„Իսկ դուք շատ էլք սիրում ձեր քրոջը, երբ
նա կենդանի էր, հարցը ես, շատ:

Նա անհանգիստ կերպով չորս կողմը նայեց
և ձեռքը մեկնեց, աթոռի մէջքը բռնեց: Սակայն
ոչինչ չտսաց:

—Դուք սատր դարշելի մի արարած էք—և ու-
րիշ ոչինչ, շարունակեցի ես ուրախ կերպով, դա
ինձ վաղուց յայտնի է: Ես պարզեցի ձեր դժոխայ-
ին դիտաւորութիւնները իմ դէմ և իմացայ, որ ձեր
քրոջ սիրաը արդէն ուրիշին էր պատկանում, մինչ

դեռ դուք ստիպում էիք նրան և հարկադրեցիք ա-
տելութեամբ ամուսնանալ ինձ հետ: Ես գիտեմ ա-
մենը և կրկնում եմ, պարոն,—դուք ստոր էք:

«Նա յանկարծ զեր թռաւ տեղից, որպէս մի
խոցուած վարագ, գլխիցը վեր բարձրացրեց աթոռը
և գուաց վրաս, որ մի կողմ քաշուեմ:

„Արիւնս գլուխս խփեց. զգում էի, որ ան-
գուստ չարութիւնը և վայրագութիւնը եռում է մէ-
ջըս: Հին հրէշները հանդէս եկան աչքիս առաջ և
սկսեցին ողկորել ինձ նրան պատառ պատառ ա-
նելու կատաղի ցանկութեամբ: Իմ ձայնը մի վայ-
րենի գոռոցի էր նմանում:—Նզնիք և անէծք, թը-
շուառական, պոռացի ես մի ահսելի ձայնով և նոյն-
պէս վեր ցատկեցի տեղիցս ու առաջ ընկայ: Այս,
գիտցիր, անիծուած, ես եմ նրան սպանողը: Ես
խելագար եմ. գժոխիք ու տարտարոս իջեր, նզով-
ուած. ինձ արիւն է հարկաւոր, արիւն.... Եւ ես
սակայափայել մի հարուածով յետ շալրտելով երեսիս
նետած աթոռը, վրայ պրծայ, բռնեցի նրան կըրծ-
քից և երկուսս էլ թաւալուեցինք գետին:

Հանագր բան չէր այդպիսի կոփէր: Նա՝ բարձր
և յաղթանդամ մի տղամարդ—կովում էր իւր կեան-
քի համար: Իսկ ես դիտէի, որ աշխարհքումս ոչ մի
բան չի հասնիլ իմ ոյժիս և բացի այդ, արդարու-
թիւնը իմ կողմն էր.... Այս իմ կողմն էր, թէկուզ
ես խելագար էլ լինէի: Շուտով նա յոդնեց այդ ան-
հաւասար կուում: Ես չոքեցի նրա կըծքին և երկու

ձեռքով պինդ հուպ տուի ջղոտ կոկորդը: Դէմքը շառագունեց, աչքերը գլուխը թռան, լեզուն դուրս ցցեց, կարծես թէ ինձ գրգուի էր ուզում: Ես աւելի ու աւելի պինդ սեղմեցի կոկորդը:

„Յանկարծ դուռը բացուեց, ներս խուժեց մարդկանց ահագին խումբ աղմուկով ու իրարանցումով, որոնք և միասին յարձակուեցին խելազար հսկայի վրայ:

„Գաղանիքս բացուած էր և ինձ մնում էր այժմ կոռուել իմ ազատութեանս համար: Արագութեամբ վեր ցատկեցի և նետուեցայ ուղղակի իմ թշնամիներիս կենզրոնը ու մի ակնթարթում ճանապարհ բաց արի ինձ համար: Կարծես թէ իմ զօրեղ բազուկը կացնով զինուած լինէր: Բոթելով ու վայր ձգելով ամենքին, ով փորձում էր ճանապարհս կտրել, ես հասայ դռներին, մի ոստիւնով ցատկեցի ճաղերի վրայով և միւս վայրկեանին արդէն փողոցումն էի:

„Ես սկսեցի բոլոր ուժովս ուղիղ դէպի առաջ վազել և ոչ ոք չէր համարձակվում առաջս կտրել: Սկզբում ես աղմուկ և քայլերի ձայներ էի լառմ յետելցս, որոնք և ստիպում էին ինձ աւելի ու աւելի արագացնել քայլերս: Իայց աղմուկը հետզհետէ թռւլանում էր և վերջապէս բոլորովին լուեց: Իսկ ես գետափառով առաջ էի վազում, ցատկելով ճահճների, առուների, փոսերի, պատերի ու ցանցերի վրայով, և վայրենի աղաղակները բարձրացնելով, որ միայն

կրկնում էին իմ շուրջս խմբուած ոգիներն ու հրէշները: Այդ աղաղակներս երկնային ոգիների բերանում աւելի ուժովին էին հնչում և ամբողջ օդը խլացնում: Այդ դեռ և սատանի ճուտերը յափշտակեցին ինձ իրանց օդային բազուկներով և տարան քամու թիերի վրայ: Նոքա բղաւում, ճղաւում, հեծեծում շըւացնում էին. յանկարծ շպրտեցին ինձ մի բարձր պատի վրայով, զլուխս շմեց և ես անզգայ զլորուեցի խոնաւ գետնի վրայ: Ուշքի գալով, ես ինձ տեսայ այստեղ, այս ուրախ խցում, որտեղ շատ քիչ են թափանցում արևի ճառագայթները. իսկ լուսինը կարծես գաղտագողի է նայում և իր լոյսը աղօտ կերպով սփռում սենեակս, այն էլ, կարծես, նրա համար միայն, որ աւելի պարզ երեցնի ինձ բոլոր այս սոսկալի ու մուայլ տեսիլքները և այս անխօս ուրուականը, որը միշտ արձանացած է իր այդ մութ անկիւնում:

„Համարեա թէ միշտ, գիշեր ցերեկ անքուն՝ անկողնումս պառկած՝ ես լսում եմ մերթ ընդ մերթ օտարօտի ձիչ ու աղաղակ այս ընդարձակ շինութեան գանազան մասերից: Ո՞վ է, ինչ է ուզում անել դրանով՝ ես չը գիտեմ. բայց միայն կասկած չը կայ, որ ամուսնուս այդ դալկացած ուրուականը մասնակից չէ զորան: Նա միշտ համեստ ու մեղմ է. հէնց որ գիշերուայ խաւարի առաջին ստուերը ընկընում է այս խուցը, նա երկուութեամբ մեխւում է իր մութ անկիւնում և այնպէս արձանացած մը-

նում է միենոյն տեղում, ականջ դնելով իմ երկաթի շղթաների ուրախ երժտութեան և լարուած ուշադրութեամբ ու զմայլմամբ, թէ ինչպէս եմ թռչկոտում ես իմ յարդի անկողնի վրայ:

Չեռագրի վերջում մի ուրիշ ձեռքով հետեւեալ նկատողութիւնն է կցած եղել՝

Սա մի բաւական հազուագիւտ և ոչ այնքան սովորական դէպք է: Այդ դժբախտի խելագարութիւնը, որը գրել է այս տողերը զառանցանքի բոպէին, անշուշտ կարող էր հետեւանք լինել այն վատ ուղղութեան, որը տրուել է նրա մտաւոր ընդունակութիւններին մատաղ հասակից: Դա մի տխուր օրինակ է այն բանի, թէ ինչպիսի կորստաքեր հետեւանքներ կարող է ունենալ զեղիս ու շուայտ երիտասարդութիւնը: Զեղիս, ցոփ կեանքը, անզուսպ կրքերն ու ամեն տեսակ ծայրահեղութիւններ պէտք է անշուշտ աստիճանաբար առաջացնէին ուղեղի հիծումն ու խանդարում, առողջութեան քայլայում, արեան տենդային եռումն և հետեւաբար բոլոր հոգեական ոյժերի քայլայում: Խելացնորման առաջին նշանը նրա զլխում մեխուած այն տարօրինակ միտքըն էր, որ իրը թէ ժառանգական խելագարութիւնը նրանց առհմում սերնդից սերունդ է անցնում: Պէտք է կարծել, որ նա պատհմամբ ծանօթ էր բըժչկական յայտնի տէօրային, որ ենթաղլում է այդ տեսակ դժբաղութիւն մարդկային բնութեան մէջ: Այդ միտքը նրա հոգեկան գործողութիւններին տու-

եց մուայլ ուղղութիւն և ազգեց նրա տրամադրութեան վրայ. առաջացրեց հիւանդոտ ցնորսամտութիւն, որ վերջը բնականաբար փոխուեց կատաղի խելագարութեան: Շատ հաւանական է, և նոյն իսկ կասկած չը կայ, որ բոլոր նկարադրուած մանրամասնութիւնները, պատահել են խկապէս, գուցէ միայն ըիչ չափազանցացրած նրա հիւանդոտ երկակայութեամբ. պէտք է միայն զարմանալ և չնորհակալ լինել բախտին, որ նա իր այդ դրութեամբ այդքան երկար ժամանակ մնալով աննկատելի իրան մօտիկ ու ծանօթ մարդկանց շրջանում, աւելի սարսափելի չարիքներ չէ առաջացրել: Ինչը չէ ընդունակ անելու բուռն և անսանձ կրքերի տէր մարդը, եթէ նորան չէ ղեկավարում խոհուն միտքը:

ՎԵՐԴ

ազգ քորա և մայնաբեր բարեւ զ
տուակաց առաջար ընդունաւու զայի մասն
քառակ ընտու զարաւալան պայմի ու մայի
բարեւ ու մայնանու տաճ ժամանակութայի
առաջարան նախագույնի պայմի ու առաջ ու նախար
այն է առար ու առաջ մայնանար պարեւ առաջ
առաջար առաջար ազգ նախագույնի ու ինչ
ու բարեւ առաջար ազգ նախագույնի ու ինչ
առաջար առաջար քայ զի առ ու մայնանար յան
թեսու մայի ու մայնանար խոյան բանական զարկ
ու մայնանար մայի մայնանար զայի մայի
ու մայնանար քայ զի առ ու մայնանար յան
թեսու մայի ու մայնանար խոյան բանական զարկ



737

2013

